ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ԵՐԱՍԽ ԳՅՈՒՂԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2013 թվական N 1

2013թ.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ 18 կետով և «Տեղական Տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

Որոշում է հաստատել Երասխ գյուղի՝ 2013թ.-ի տեղական տուրքը և վճարները՝ ըստ հավելված 1-ի

Կողմ - Դեմ - Ձեռնպահ -

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԽՈՒԴՈՅԱՆ ԽԴՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՅՈՒԼՆԱՐԱ

Գյուղապետ՝ ՌԱԴԻԿ ՕՂԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՒՐԽ ԵՐԱՍԽԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ARARAT MARZ ERASKH VILLAGE MAYOR'S OFFICE 04101167

Հավելված 1

Երասխի ավագանու

2013թ.հունվարի 9-ի թիվ 1 որոշման

2013թ. Տեղական տուրքեր և վճարների մասին

Երասխ համայնքում 2013թ.-ի համար սահմանել տեղական տուրքեր և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1 – ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարական /տեղադրման/ թույլատվության համար՝ տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբեկտների համար՝

ա - մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային / տների ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբեկտների համար՝ 15.000դրամ:

բ - սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտներ համար՝

- 201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողօբյեկտների համար՝ 30.000դրամ
- 501-ից մինչև 1000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000դրամ
- 1001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողօ բյեկտների համար՝ 70.000դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա.) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000դրամ

բ.) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000դրամ

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման,աշխատանքների /բացառությամբ

ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերում/ համար եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտներ ընդհանուր մակերեսի՝

ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության համար՝ 3.000 դրամ,

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված նորմերի՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերի.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 5000դրամ:

4) Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է `

ա/ ոգելից խմիչքների վաճառքի թույլատվության համար՝ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000դրամ:

բ/ ծխախոտի վաճառքի թույլատվության համար՝ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000դրամ:

5) Համայնքի տարածքում՝

ա/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝350դրամ:

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 175.000դրամ:

գ/ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլատվության համար տեղական տոջրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 10.000դրամ:

6) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումներով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները(սաունաները) խաղատները ժամը 24^{00} -ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝50.000դրամ,

գ/ բաղնիքների / սաունաների/ համար՝ 200.000դրամ,

դ/ խաղատների համար՝ 1.000.000դրամ,

ե/ շահումներով խաղերի և վիճակախաղերի համար՝ 300.000դրամ,

7) Համայնքի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա, արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար մեկ մետր քառակուսի տեղական տուրքը սահմանել՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոսով արտադրանքի գովազդող արտաքին գովազդի համար՝ 2.000 դրամ,

բ/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝ 5,000 դրամ :

գ/ այլ արտաքին գովազդի համար ՝ 1.000դրամ

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝700 դրամ :

8) Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն իրականացնելու թույլատվության համար սահմանվում է՝ 5.000դր

9) Աճուրդ- վաճառքների և մրցույթների համար սահմանել յուրաքանչուր մասնակցից 2.000դրամ վճար:

10) 1.2.3. կետերի դրույքաչափերը կիրառել 0.3 գործակցով:

11) Տեղական տուրքերի և վճարների հաշվարկման և գանձման կարգի պահպանման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի վրա:

Երասխի գյուղապետ Ռ.ՕՂԻԿՅԱՆ